«Խորհուրդը երկարօրէն դրաղուեց հրացանաձգութիւնը, թալանը և կոտորածը կանգնեցնելու խնդրով։ Ջնայած հաշտութեան կնքման և յայտարարման, հրացանաձգութիւնը շարունակւում է և թալանը ստանում ահաւոր չափեր։ Դրութիւնը չափազանց վտանգաւոր կերպարանք կը ստանայ, եթէ Խորհուրդը գործ չդնի հերոսական ջանքեր՝ թալանի և հրացանաձգութեան առաջն առնելու համար։ Որոշեց հրացանադարի անել այն բոլոր զինուորներին, որոնք, հակառակ բոլոր նախազգուշացումներին, կը շարունակեն դրաղուել թալանով կամ հրացանաձգութեամբ։ Որոշեց կուին վերջ դնելու համար յանձնարարել նախագահին և Համագասպին դնալու առաջաւոր դիրքերը և անմիջապէս ազդելու զինուորների վրա, որ դադարեցնեն կրակը, եթէ նոյնիսկ թուրքերի կողմից հաա ու կենա հրացանաձգութիւն լինի։ Որոշեց հրատարակել մի կոչ, որով Ազգ. Խորհուրդը հրաւիրում էր հայ թաղամասերում ապրող բոլոր քաղաքացիներին ամենախիստ կարգապահութեան՝ սպառնալով ամենածանր պատասխանատուութեան ենթարկել դանցառուներին։ Որոշեց կարգը պահպանելու համար քաղաքի հայկական մասի վրա նշանակել մի ընդհանուր հսկիչ, այդ պաշտօնը յանձնուեց Լ. Բալանթաբեանին, իսկ վերջինիս հրաժարուելուց յետոյ՝ Գ. Բալայեանին։ Այդ նպատակով նշանակուեցին հայկական բոլոր թաղամասերի վրա ևս յատուկ հսկիչներ»։

Բազուի Ազգ. Խորհրդի նախագահը և Համագասպը ամբողջ դիշերը զբաղուած էին Խորհրդի որոշումներն իրագործելով — դադարեցնել անիշխանութիւնը, կռիւը և հրդեհը։ Ի մի կենտրոնացուեցին Բազուում գտնուած Հ. Յ. Դաշնակցութեան լաւագոյն մարտիկները՝ թուով մի քանի հարիւր հոգի. Համագասպի զօրամասից առնուեցին մի քանի վստահելի և կարգապահութեան ենթարկուած վաշտեր։ Դիշերը ժամը 4–ին այդ զօրամասերը բռնելու էին այն սահմանադիծը, ուր կռիւ էր տեղի ունենում խորհրդային իշխանութեան և Մուսաւաթի միջև։ Այդ զօրքերը թոյլ չպիտի տային զինուած մարդկանց մի մասից միւս մասը անցնելու. թրքական մասից եղած հրացանաձգութեան չպիտի պատասխանէր։

Այդպէս էլ արաւ։ Հայկական զօրամասերը բռնեցին դիրքեր կուող երկու կողմերի միջև։ Այս դրութիւնը տևեց դիշերուայ ժամը 4–ից մինչև 21 մարտի ցերեկուայ ժամը 12–ը։

Երբ երկու կողմերը վերջ տուին հրացանաձգութեան, թրքական մասը ամբողջապէս ծածկուած էր ծխով. աստիճանաբար սկսեցին դուրս դալ կանայք, երեխաներ, երիտասարդներ, պառաւներ՝ իւրաքանչիւրը ձեռքին բռնած փայտի կտոր՝ վրան սպիտակ լաթ՝ ի նշան հաշտութեան։ Այսպիսով, թրքական համարեա ամբողջ մասը դուրս եկաւ և յայտնեց իր հնազանդութիւնը։ Հայ զինուորները չարժուեցին նրանց ընդառաջ, խառնուեցին իրար, և մի օր առաջուայ հրացանաձգութեան տեղ այժմ լսւում էր լաց ու հառաչ, արցունք ու համբոյր։

Այսպիսով, վերջ ստացաւ մի քանի օր տևող մղձաւանջը, և քաղաքը խաղաղեց։

Այս կռիւներում, թուրքերի դնդակով, սպանուեց Լ. Աթաբէգեանը, որ, իբրև անդամ Ազդ. Խորհրդի պատւիրակութեան, դնում էր թրքական թաղը՝ բանակցելու համար։ Լ. Աթաբէգեանի մահով Բազուի Բանւորական